

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՓԱՍՏԱՀԱՎԱՔ ԽՈՒՄԲ Է ՍՏԵՂԾՈՒՄ**

24.11.2020 17:34



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ**

Փաստաբանների պալատի նախագահի 24.11.2020թ. 389-Ա որոշմամբ ստեղծվել է փաստահավաք խումբ:

Մեջբերում որոշումից`

**« Ելնելով Փաստաբանների պալատի կանոնադրությամբ արձանագրված Հայաստանի Հանրապետության կայացմանն ու զարգացմանն օժանդակելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը նպաստելու նպատակներից,**

**նկատի ունենալով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի գործուն և բացահայտ օժանդակությամբ և վարձկան ահաբեկիչների ակտիվ ներգրավմամբ Արցախի Հանրապետության նկատմամբ ձեռնարկած ռազմական հարձակմանը նախորդող և հաջորդող դեպքերի ուսումնասիրության անհրաժեշտությունը,**

**հաշվի առնելով Հայաստանի և Արցախի ռազմաքաղաքական դեկավարության կողմից ռազմական գործողությունների ընթացքում զորահավաքի կազմակերպման, քարոզչության, մարտական օգնության և մարտերի կազմակերպման ժամանակ թույլ տրված խախտումների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տեղեկությունները պարզելու անհրաժեշտությունը,**

**նկատի ունենալով ռազմական անհաջողությունների մեջ առանձին պաշտոնատար անձանց կողմից զինվորին մեղադրելու ցավալի և խիստ մտահոգիչ հայտարարությունները,**

**ի գիտությունն ընդունելով Հայաստանի և Արցախի զինվորի և ժողովուրդների հերոսական կերպարի և իր ուժերի նկատմամբ հավատը և վստահությունը վերականգնելու անհրաժեշտությունը,**

**դեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածով,**

**ՈՐՈՇԵՑԻ`**

- 1. Փաստաբանների պալատում ստեղծել**

**փաստահավաք խումբ՝ ներգրավելով  
փաստաբանների, լրագրողների և  
փորձագետների (մասնագետների)**

**2. Փաստահավաք խմբի աշխատանքների  
համակարգող նշանակել Փաստաբանների  
պալատի խորհրդի անդամ Սիմոն Բաբայանին  
(համաձայնությամբ)՝ լիազորելով  
համակարգողին սահմանել փաստահավաք  
խմբի աշխատանքային ներքին ընթացակարգը.**

**3. Փաստահավաք խմբի կողմից հավաքված  
նյութերը (այդ թվում՝ հարցազրույցների  
տեսաձայնագրությունները) ամփոփիչ  
վերլուծությամբ ներկայացնել իրավասու  
իրավապահ մարմնին:»:**

Փաստաբանների պալատի աշխատակազմ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&  
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } }
```